ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ռումանահայ թեմի տարեկան պատգամավորական ժողովի բացման հանդիսավոր նիստը տեղի ունեցավ կիրակի, 11 մայիս, Բուքրեշի Հայ մշակույթի տան մեջ։

Թեմին առաջնորդ Վազգեն եպիսկոպոս, բացված հայտարարելով պատգամավորական ժողովը, հրավիրեց պատգամավորները՝ ընտրել ժողովին դիվանը, որ, ժողովականներու միահամուռ հավանությամբ, կազմվեցավ հետևյալ կերպով.— դոկտ. Գր. Բամպուքճյան—նախագահ, Տիոնիսիե Զոմաք—փոխ նախագահ, և Օ. Գալփաքյան և Ա. Վարժապետյան քահանան—քարտուղարներ։

Նախագահ դոկտ. Բամպուքճյան շնորհակալություն հայտնելով իրենց ընծայված վստահության համար, բեմ հրավիրեց Դավանության նախարարության ներկայացուցիչը՝ տնօրեն Ա. Մոիշեանուն։ Ապա կարդաց անունները պատգամավորներուն, որոնցմե ներկա էին.—

Եկեղեցական պատգամավորներ՝ Գնել Մանտալյան, Մեսրոպ Պարոնյան և Արսեն Վարժապետյան քահանաներ։

Բուքրեշի պատգամավորներ.— դոկտ. Գր. Բամպուքճյան, Վահան Դանիելյան, դոկտ. Եր. Սերոբյան, Արտաշես Գասարճյան, փաստաբան Պերճ Կարապետյան, Թովմաս Շիշմանյան և Երվանդ Կարապետյան։

Կոնստանցայեն.— Երվանդ Պարսամյան, փաստաբան Արամ Հակոբ և Լևոն Իշթիարյան։

Պրաիլայեն.—Սերոբ Պաղտասարյան, Ֆոկշանեն.—Մկրտիչ Ճըզըլյան, Ռոմանեն.— Գեորգ Մկրտիչյան, Պակրուեն.—Միհ. Մարտիրոսյան, Սուչավայեն.— Նիքու Միհայ, Բոտոշանեն.—Տիոնիսիե Զոմաք, Կալացեն.—Իսկուհի Զալբգյան, Կրայովայեն.— դոկտ. Սարգիս Փափազյան, Տըրկու-Օգնայեն.—Հրանտ Աքթարյան, Պիտեշտեն.—դատախազ Ալեքսի Սիլվիյան, Բաբադաղեն.— փաստաբան Ե. Մելիտոն, Տուլչայեն.—Վահե Գրիգորյան, Պլոեշտեն.— Պետրոս Էպլիղաթյան։

Հանդիսավոր նիստին ներկա էին նաև Հայկական դեմոկրատական կոմիտեի գործադիր կոմիտեի անդամներ՝ գլխավորությամբ քարտուղար ընկեր Դինար Մարգարյանի, Բուքրեշի թաղական խորհուրդը՝ գլխավորությամբ Օ. Գանթարյանի, ինչպես նաև բազմաթիվ հանդիսականներ։

Օրինական համարվելով ժողովը, նախագահ դոկտ. Բամպուքճյան զեկուցանելու հրավիրեց Վազգեն սրբազանը, որ իր կարդին ծանրացավ՝ դեպի Սովետական Հայաստան և էջմիածին կատարած իր ուղևորության վրա, վեր հանելով իր եպիսկոպոսական օծման պարագաները, Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ խաղաղության համար ըրած թելադրությունները։ Վազգեն սրբազան վերջացուց իր զեկույցը, ցույց տալով այն պայքարը, զոր տարավ խաղաղության համար Հայ Եկեղեցին, շնորհակալություն հայտնեց Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի և Հայաստանի կառավարությանց, և մաղթանքներ ըրավ Կաթողիկոսին կենաց։

Նախագահ դոկտ. Բամպուքճյան կարդաց երեք հեռագիրներ, ուղղված Դավանությանց նախարար Վ. Փոկըշեանուի, Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Ռումանիո Պատրիարք Յուստինիանի, հեռագիրներ՝ որոնք ժողովին հավանության արժանացան։

Այսպիսով վերջացավ հանդիսավոր նիստը։

Պատգամավորական ժողովի նիստը շարունակվեցավ ցերեկե վերջ։

Նախագահ դոկտ. Գր. Բամպուքճյան խոսք տվավ թեմական խորհուրդի փոխ-նախագահ փաստաբան Հրանտ Հակոբյանի, որ կարդաց թեմական խորհուրդի եռամյա գործունեության տեղեկագիրը։

Հաշվեքննիչ Հրանտ Աքթարյանի և թեմական խորհուրդի քարտուղար փաստաբան Տիգրան Մինասի բարոյական և նյութական հաշվետվութենեն վերջ, տեղի ունեցան կարծիքի փոխանակություններ՝ եռամյա գործունեության տեղեկագրին շուրջ։ Խոսք առին փաստաբան Ե. Մելիտոն, Ե. Պարսամյան, փաստաբան Պ. Կարապետյան, դատախազ Ա. Սիլվիյան, դոկտ. Ե. Սերոբյան, Ա. Գասարճյան, փաստաբան Ա. Հակոբ և Վ. Դանիելյան, որոնք իրենց գոհունակությունը հայտնեցին թեմական խորհուրդի եռամյա գործունեության և Վազգեն եպիսկոպոսի զեկույցի մասին։ Ապա ժողովը իր հավանությունը հայտնեց թեմական խորհուրդի բարոյական և նյութական գործունեության։

Փաստաբան Տիգրան Մինաս կարդաց թեմական խորհուրդի 1952-ի բյուջեի նախագիծը, հղված Դավանությանց նախարարության, առ ի վավերացում։ Ժողովը միաձայնությամբ իր հավանությունը տվավ սույն նախագծին։

Ապա տեղի ունեցավ նոր թեմական խորհուրդի անդամներու ընտրությունը, գաղտնի քվեարկությամբ։ Ձայներու բացարձակ մեծամասնությամբ, թեմական խորհուրդի անդամ հայտարարվեցան փաստաբան Հր. Հակոբյան, Վահան Դանիելյան, դոկտ. Գր. Բամպուքճյան, դատախազ Ալեքսի Սիլվիյան, փաստաբան Տիգրան Մինաս, Հմայակ Քելլերյան, Ստեփան Շահկելտյան, փաստաբան Արամ Հակոբ, Սարգիս Ճեպելյան, փոխ-անդամներ՝ Երվանդ Սարգիսյան, Ստեփան Ստեփանյան և Հարություն Բարակյան։ Իսկ հաշվեքննիչներ՝ Վահե Փափազյան, Հրանտ Աքթարյան և Գ. Խաչխաչյան։

Վազգեն սրբազան, շնորհավորելով նորընտիր թեմական խորհուրդի անդամները, մաղթանքներ ըրավ Ռումեն Ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարության, Ռումեն աշխատավորական կուսակցության, Սովետական Հայաստանի կառավարության և անոր իմաստուն վարիչներուն, Ամենայն Հայոց Գեորգ Զ. Կաթողիկոսին, Հայկական դեմոկրատական կոմիտեին։

Ի վերջո, նախագահ դոկտ. Գր. Բամպուքճյան փակելով թեմական պատգամավորական ժողովը, ըսավ.— «Մեր այս ժողովը գերազանցորեն նվիրված էր խաղաղության պայքարին, ու մենք ամենքս մեզ նկատեցինք որպես մարտիկներ խաղաղության պայքարին։

***

Մայիս 12-ին դումարված նիստին մեջ, հետևյալ կերպով կազմված է թեմական խորհուրդի դիվանը և ճշտված են աշխատանքի բաժանումները.—

Նախագահ՝ թեմական առաջնորդ Վազգեն եպիսկոպոս, փոխ-նախագահներ՝ դոկտ. Գր. Բամպուքճյան և Վ. Դանիելյան, քարտուղար՝ փաստաբան Տիգրան Մինաս, դանձապահ՝ Հմ. Քելլերյան, խորհրդականներ՝ փաստաբան Հրանտ Հակոբյան, դատախազ Ալեքսի Սիլվիյան, փաստաբան Արամ Հակոբ, Սարգիս Ճեպելյան և Ստեփան Շահկելտյան։

(«ՆՈՐ ԿՅԱՆՔ», 18 մայիսի 1952 թ.)